<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-2018/15-2-ԵՊԲՀ

ք. Երևան << 15 >> << 03 >> 2018 թ.

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր **Ա. Ա.Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, և «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Թադևոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **5 (հինգ)** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **5 (հինգ)** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 28 808 500 (քսան ութ միլիոն ութ հարյուր ութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու

նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 26 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**<<ԳՆՈՐԴ>>**

**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ**

**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**

**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ**

**հ/հ 11500166513800**

**ՀՎՀՀ 01503448**

**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

**(ստորագրությունը)**

**Կ.Տ**

**<<ՎԱՃԱՌՈՂ>>**

**«Կոնցեռն-Էներգոմաշ»ՓԲԸ**

**Հասցե՝ Ք.Երևան, Արզումանյան 32-10**

**Բանկ՝ «Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան»ՓԲԸ**

**Հ/Հ 217002182558001**

**ՀՎՀՀ 01210095**

**Տնօրեն՝ Բ. Ծատուրյան**

**(ստորագրությունը)**

**Կ.Տ**

Հավելված N 1
«15» 03 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/15-2-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը,որից՝ | մատակարարման հասցեն | մատակարարման ժամկետը** |
| 1 | 33691162 | Էլեկսիս Հեպատիտ C վիրուսի նկատմամբ հակամարմինների հայտնաբերման թեստ-հավաքածու | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Էլեկսիս Հեպատիտ C վիրուսի նկատմամբ հակամարմինների հայտնաբերման թեստ-հավաքածու, (Elecsys Anti-HCV): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլյումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 որոշում/տուփում: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic: | տուփ | 224070 | 12547920 | 56 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 2 | 33691162 | Էլեկսիս HIV ՄԻԱՎ 1/2 կոմբի PT վիրուսի նկատմամբ հակամարմինների | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Էլեկսիս HIV 1/2 կոմբի (Elecsys HIV 1/2 combi PT) վիրուսի նկատմամբ | տուփ | 153940 | 8466700 | 55 | ք.Երևան Հերացի 58 և | Ապրանքի մատակարարումն իրականացվ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | և HIV 1 ՄԻԱՎ հակածինի որոշման թեստ-հավաքածու | | հակամարմինների և HIV 1 ՄԻԱՎ հակածինի որոշման թեստ-հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլյումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 որոշում/տուփում: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic: | | | | | Մուրաց ան 114 | ում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո ւի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 3 | 33690000 | Cobasc311 անալիզատորների նմուշի ասեղ Probe Sample | Roche Diagnostics Գերմանիա | Cobasc311 անալիզատորների նմուշի ասեղ Probe Sample: Օրիգինալ: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան: | հատ | 584000 | 584000 | 1 | ք.Երևա ն Հերացի 58 և Մուրաց ան 114 | Ապրանքի մատակարար ումն իրականացվո ւմ է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո ւի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 4 | 33690000 | Cobas Integra սարքի համար հալոգեն լամպ /12V/100W Assy/ | Roche Diagnostics Գերմանիա | Cobas Integra սարքի համար նախատեսված չափիչ հալոգեն լամպ 12V/100W Assy: Օրիգինալ: Պահպանման պայմանները՝սենյակային ջերմաստիճանում: | հատ | 66000 | 132000 | 2 | ք.Երևա ն Հերացի 58 և Մուրաց ան 114 | Ապրանքի մատակարար ումն իրականացվո ւմ է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո ւի |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 5 | 33691162 | Էլեկսիս Ինսուլինի քանակական որոշման թեստ-հավաքածու | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորների համար Էլեկսիս Ինսուլինի քանակական որոշման թեստ-հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլյումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 որոշում/տուփում: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | տուփ | 102440 | 102440 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 6 | 33691162 | Էլեկսիս Ինսուլինի կալիբրատոր | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորների համար Էլեկսիս Ինսուլինի կալիբրատոր (Elecsys Insulin CalSet): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլյումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 4x1 մլ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | տուփ | 31490 | 31490 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 33690000 | Էլեկսիս միկրոկյուվետներ | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս և Կոբասս e 411 անալիզատորների համար Էլեկսիս միկրոկյուվետներ (Elecsys Assay cup): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլյումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 60x60միկրոկյուվետ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic: | տուփ | 45710 | 228550 | 5 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 8 | 33690000 | Էլեկսիս ծայրադիրներ | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս և Կոբասս e 411 անալիզատորների համար Էլեկսիս ծայրադիրներ (Elecsys Assay tips): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլյումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 30x120 ծայրադիր: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | տուփ | 47440 | 853920 | 18 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 9 | 33690000 | Cobas b 121 անալիզատորի համար Docking Mechanism C1/C2 | Roche Diagnostics Գերմանիա | Cobas b 121 անալիզատորի համար Docking Mechanism C1/C2: Ազդանյութի ընդունման մեխանիզմ: Օրիգինալ: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան: Հանձնելու | հատ | 19000 | 19000 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic: | | | | | | կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 10 | 33691162 | Կրիատին կինազա (CKL) որոշման թեստ-հավաքածու | Roche Diagnostics Գերմանիա | Կոբաս Ինտեգրա և Կոբաս Ս 311 անալիզատորների համար՝ Կրիատին կինազա CK cobas Integra, cobas c) որոշման թեստ-հավաքածու: Օրիգինալ: Ֆորմատ՝ 200թեստ/տուփում: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only | տուփ | 21450 | 21450 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 11 | 33691162 | C ռեակտիվ սպիտակուցի LX որոշման թեստ հավաքածու | Roche Diagnostics Գերմանիա | Կոբաս ինտեգրա և Կոբաս Ս311 անալիզատորների համար C-ռեակտիվ սպիտակուց (CRP LX, cobas Integra,cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 300թեստ/տուփում: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only: | տուփ | 145750 | 291500 | 2 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | օրվա ընթացքում |
| 12 | 33691162 | Պրեսիկոնտրոլ Կլին Չեմ Մուլտի 1 ստուգիչ հեղուկ | Roche Diagnostics Գերմանիա | Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված Պրեսիկոնտրոլ Կլին Չեմ Մուլտի1 /Cobas integra400 Precicontrol Clinchem Multi1/ ստուգիչ հեղուկ: Օրիգինալ: Ֆորմատ՝ 20x5մլ: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: | տուփ | 177340 | 177340 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 13 | ˳33691162 | Պրեսիկոնտրոլ Կլին Չեմ Մուլտի 2 ստուգիչ հեղուկ | Roche Diagnostics Գերմանիա | Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված Պրեսիկոնտրոլ Կլին Չեմ Մուլտի2 / Cobas integra400 Precicontrol Clinchem Multi2/ ստուգիչ հեղուկ: Օրիգինալ: Ֆորմատ՝ 20x5մլ: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only: | տուփ | 177340 | 177340 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 14 | 33691162 | Լվացող լուծույթ /Cleaning Solution/ | Roche Diagnostics Գերմանիա | Cleaning Solution Կոբաս ինտեգրա անալիզատորի համար: Ֆորմատ՝ 1000 մլ: Օրիգինալ: Ֆիրմայի նշանի առկայություն: | հատ | 15100 | 120800 | 8 | ք.Երևան Հերացի 58 և | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Պահպանման պայմանները սենյակային: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն: | | | | | Մուրաց ան 114 | թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո ւի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 15 | 33690000 | Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար Cuvette Waste Box, N20 | Roche Diagnostics Գերմանիա | Cuvette Waste Box, Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար: Ֆորմատ՝ 20հատ/տուփում: Օրիգինալ: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: | տուփ | 30190 | 60380 | 2 | ք.Երևա ն Հերացի 58 և Մուրաց ան 114 | Ապրանքի մատակարար ումն իրականացվո ւմ է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո ւի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 16 | 33690000 | Կոբաս ինտեգրա անալիզատորի համար Sample Cups, with whole blue, N1000 | Roche Diagnostics Գերմանիա | Կոբաս ինտեգրա անալիզատորի համար Sample Cups, with whole: Ֆորմատ՝ 1000հատ/տուփում: Օրիգինալ: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: | տուփ | 16930 | 135440 | 8 | ք.Երևա ն Հերացի 58 և Մուրաց ան 114 | Ապրանքի մատակարար ումն իրականացվո ւմ է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո ւի ներկայացված |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 17 | 33690000 | Կոբաս U311 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար | Roche Diagnostics Գերմանիա | Կոբաս U311 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար: Օրիգինալ: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: | տուփ | 660000 | 660000 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 18 | 33691162 | Ակտիվատոր Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար | Roche Diagnostics Գերմանիա | Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար Activator (for Cobas Integra): Օրիգինալ: Ֆորմատ՝ 9x12մլ: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only: | տուփ | 42160 | 42160 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 19 | 33690000 | Միկրոկյուվետներ Կոբաս ինտեգրա | Roche Diagnostics Շվեյցարիա | Cobas integra microcuvettes Կոբաս ինտեգրա անալիզատորի համար: | տուփ | 208710 | 417420 | 2 | ք.Երևան Հերացի | Ապրանքի մատակարարումն |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | անալիզատորի համար | | Օրիգինալ: Ֆորմատ՝ 20x1000 հատ: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: | | | | | 58 և Մուրաց ան 114 | իրականացվո ւմ է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո ւի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 20 | 33691162 | Կոբաս ինտեգրա անալիզատորի համար ISE Etcher | Roche Diagnostics Գերմանիա | ISE Etcher Կոբաս ինտեգրա անալիզատորի համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 6 x 11մլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only: | տուփ | 8950 | 8950 | 1 | ք.Երևա ն Հերացի 58 և Մուրաց ան 114 | Ապրանքի մատակարար ումն իրականացվո ւմ է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո ւի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 21 | 33691162 | Էլեկսիս ՍԱՊ | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս ՍԱՊ (Elecsys SAP) ԷլեկսիսԿոբաս e 411 անալիզատորի համար: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 250 թեստ: Պահպանմանպայմանները՝ 2-8 C ջերմաստիճանում, | հատ | 100370 | 100370 | 1 | ք.Երևա ն Հերացի 58 և Մուրաց ան 114 | Ապրանքի մատակարար ումն իրականացվո ւմ է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Հանձնելուպահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic: | | | | | | ի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 22 | 33691162 | Cobas e 411 Elecsys 2010 Էլեկսիս սեռական հորմոններ կապող գլոբուլինի քանակական որոշման թեստ-հավաքածու | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս սեռական հորմոններ կապող գլոբուլին (Elecsys SHBG) Էլեկսիս սեռական հորմոններ կապող գլոբուլինի քանակական որոշման թեստ-հավաքածու: Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլյումինեսցենտային անալիզ.: Ֆորմատ՝ 100 որոշում: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic: | տուփ | 133380 | 133380 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 23 | 33691162 | Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար Պրեսիկոնտրոլ RF | Roche Diagnostics Գերմանիա | Precicontrol RF Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար: Օրիգինալ: Ստուգիչ հեղուկ: Ֆորմատ՝ 2 x 1մլ(մակարդակ 1) և 2x1մլ(մակարդակ 2): Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն :Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only | տուփ | 70290 | 70290 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | օրվա ընթացքում |
| 24 | 33690000 | Cobas e 411 Elecsys 2010 Էլեկսիս կյուվետների թափման արկղ | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս Կյուվետների թափման արկղիկ (Elecsys Clean liner)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլյումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 14 արկղ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic: | տուփ | 23290 | 46580 | 2 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 25 | 33691162 | Ռեֆլոտրոն Ալանինամինոտրանսֆերազա (ԱԼՏ) | Roche Diagnostics Գերմանիա | Ռեֆլոտրոն Ալանինամինոտրանսֆերազա (Reflotron GPT թեստ) ալանինամինոտրանսֆերազա որոշման քանակական թեստ: Օրիգինալ: Մեթոդ՝ ռեֆլակտրոմետրիա: Ռեֆլոտրոն Պլուս բիոքիմիական անալիզատորի համար : Ֆորմատ՝ 30 ստրիպ հերմետիկ փակ տուփում : Ստուգող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2,առկայություն For In Vitro | տուփ | 29700 | 118800 | 4 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Diagnostic: | | | | | | |
| 26 | 33691162 | Ռեֆլոտրոն բիլիռուբին | Roche Diagnostics Գերմանիա | Ռեֆլոտրոն բիլիռուբին (Reflotron BIL թեստ)բիլիռուբինի որոշման քանակական թեստ: Օրիգինալ: Մեթոդ՝ ռեֆլակտրոմետրիա: Ռեֆլոտրոն Պլյուս բիոքիմիական անալիզատորի համար: Ֆորմատ՝ 30 ստրիպ հերմետիկ փակ տուփում: Ստուգող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2,առկայություն For In Vitro Diagnostic | տուփ | 25300 | 50600 | 2 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 27 | 33691162 | Սելպակ DCL | Sysmex Գերմանիա | Սելպակ DCL լուծիչ: Օրիգինալ: Նախատեսված է ՍԻՍՄԵՔՍ ընկերության XN350, XN450 սարքերի համար: Ֆրմատ 20լ: Ստուգվող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: Պարտադիր է ISO13485, CE, TUV և ռեագենտի արտադրանքի որակի սերտիֆիկատի առկայությունը: | տուփ | 45000 | 1125000 | 25 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 28 | 33691162 | Լայզերսելլ WDF | Sysmex Գերմանիա | Լայզերսելլ WDF: Օրիգինալ: Նախատեսված է ՍԻՍՄԵՔՍ | տուփ | 48000 | 384000 | 8 | ք.Երևան Հերացի | Ապրանքի մատակարարումն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընկերության XN350, XN450 սարքերի համար: Ֆորմատ 2լ: Ստուգվող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: Պարտադիր է՝ ISO13485, CE , TUV և ռեագենտի արտադրանքի որակի սերտիֆիկատի առկայությունը: | | | | | 58 և Մուրաց ան 114 | իրականացվո ւմ է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո ւի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 29 | 33691162 | Ֆլյուրոսելլ WDF | Sysmex Գերմանիա | Ֆլյուրոսելլ WDF: Օրիգինալ: Նախատեսված է ՍԻՍՄԵՔՍ ընկերության XN350, XN450 սարքերի համար: Ֆորմատ՝ 2*22մլ: Ստուգվող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: Պարտադիր է՝ ISO13485, CE ,TUV և ռեագենտի արտադրանքի որակի սերտիֆիկատի առկայությունը: | տուփ | 231000 | 1386000 | 6 | ք.Երևա ն Հերացի 58 և Մուրաց ան 114 | Ապրանքի մատակարար ումն իրականացվո ւմ է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատո ւի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 30 | 33691162 | XN-L չեք մակարդակ 1 | Sysmex ԱՄՆ | XN-L չեք մակարդակ 1, որակի հսկման նյութ: Օրիգինալ: Նախատեսված է XN350, XN450 սարքերի համար: Ֆորմատ՝ 1*3մլ: Ստուգվող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ | հատ | 54000 | 54000 | 1 | ք.Երևա ն Հերացի 58 և Մուրաց ան 114 | Ապրանքի մատակարար ումն իրականացվո ւմ է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | | | | | | ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 31 | 33691162 | XN-L չեք մակարդակ 2 | Sysmex ԱՄՆ | XN-L չեք մակարդակ 2, որակի հսկման նյութ: Օրիգինալ: Նախատեսված է XN350, XN450 սարքերի համար: Ֆորմատ՝ 1*3մլ: Ստուգվող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | հատ | 54000 | 54000 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 32 | 33691162 | XN-L չեք մակարդակ 3 | Sysmex ԱՄՆ | XN-L չեք մակարդակ 3, որակի հսկման նյութ: Օրիգինալ: Նախատեսված է XN350, XN450 սարքերի համար: Ֆորմատ՝ 1*3մլ: Ստուգվող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | հատ | 54000 | 54000 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | օրվա ընթացքում |
| 33 | 33691162 | Էլեկսիս պրոլակտինի կալիբրատոր | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս պրոլակտին կալիբրատոր (Elecsys Prolactin CS): Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորների համար: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլյումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 4*1մլ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic | տուփ | 31490 | 31490 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 34 | 33691162 | Էլեկսիս վիտամին D -ի պրեսիկոնտրոլ Elecsys ® Preci Control Vitamin D total II | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս ընդհանուր վիտամին D-ի պրեսիկոնտրոլ (Elecsys ® Preci Control Vitamin D total II ): Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլյումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 2*3*1մլ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic | տուփ | 97900 | 97900 | 1 | ք.Երևան Հերացի 58 և Մուրացան 114 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 35 | 33690000 | Էլեկսիս թափման արկղ | Roche Diagnostics Գերմանիա | Էլեկսիս կլին Լայներ (Elecsys clean liner): Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: | տուփ | 23290 | 23290 | 1 | ք.Երևան Հերացի 58 և | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2018 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 14 հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic | | | | Մուրացան 114 | թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |

*Պարտադիր պայման է՝ ապրանքի չօգտագործված լինելը*

*** Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:*

**<<ԳՆՈՐԴ>>**

**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ**
**h/h 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**
**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**<<ՎԱՃԱՌՈՂ>>**

**«Կոնցեռն-Էներգոմաշ»ՓԲԸ**
**Հասցե՝ Ք.Երևան, Արզումանյան 32-10**
**Բանկ՝ «Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան»ՓԲԸ**
**Հ/Հ 217002182558001**
**ՀՎՀՀ 01210095**

**Տնօրեն՝ Բ. Թադևոսյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 15 » 03 2018թ. կնքված*
*«ԳՀԱՊՁԲ-2018/15-2-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ի՝ դեկտեմբերին այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33691162 | Էլեկսիս Հեպատիտ C վիրուսի նկատմամբ հակամարմինների հայտնաբերման թեստ-հավաքածու | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 2 | 33691162 | Էլեկսիս HIV ՄԻԱՎ 1/2 կոմբի PT վիրուսի նկատմամբ հակամարմինների և HIV 1 ՄԻԱՎ հակածինի որոշման թեստ-հավաքածու | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 3 | 33690000 | Cobasc311 անալիզատորների նմուշի ասեղ Probe Sample | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 4 | 33690000 | Cobas Integra սարքի համար հալոգեն լամպ /12V/100W Assy/ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 33691162 | Էլեկսիս Ինսուլինի քանակական որոշման թեստ-հավաքածու | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 6 | 33691162 | Էլեկսիս Ինսուլինի կալիբրատոր | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 7 | 33690000 | Էլեկսիս միկրոկյուվետներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 8 | 33690000 | Էլեկսիս ծայրադիրներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 9 | 33690000 | Cobas b 121 անալիզատորի համար Docking Mechanism C1/C2 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 10 | 33691162 | Կրիատին կինազա (CKL) որոշման թեստ-հավաքածու | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 11 | 33691162 | C ռեակտիվ սպիտակուցի LX որոշման թեստ հավաքածու | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 12 | 33691162 | Պրեսիկոնտրոլ Կլին Չեմ Մուլտի 1 ստուգիչ հեղուկ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 13 | 33691162 | Պրեսիկոնտրոլ Կլին Չեմ Մուլտի 2 ստուգիչ հեղուկ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 14 | 33691162 | Լվացող լուծույթ /Cleaning Solution/ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 15 | 33690000 | Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար Cuvette Waste Box, N20 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 16 | 33690000 | Կոբաս ինտեգրա անալիզատորի համար Sample Cups, with whole blue, N1000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 17 | 33690000 | Կոբաս U311 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | 33691162 | Ակտիվատոր Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 19 | 33690000 | Միկրոկյուվետներ Կոբաս ինտեգրա անալիզատորի համար | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 20 | 33691162 | Կոբաս ինտեգրա անալիզատորի համար ISE Etcher | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 21 | 33691162 | Էլեկսիս ՍԱՊ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 22 | 33691162 | Cobas e 411 Elecsys 2010 Էլեկսիս սեռական հորմոներ կապող գլոբուլինի քանակական որոշման թեստ-հավաքածու | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 23 | 33691162 | Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար Պրեսիկոնտրոլ RF | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 24 | 33690000 | Cobas e 411 Elecsys 2010 Էլեկսիս կյուվետների թափման արկղ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 25 | 33691162 | Ռեֆլոտրոն Ալանինամինոտրանսֆերազա (ԱԼՏ) | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 26 | 33691162 | Ռեֆլոտրոն բիլիռուբին | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 27 | 33691162 | Սելպակ DCL | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 28 | 33691162 | Լայզերսելլ WDF | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 29 | 33691162 | Ֆլյուրոսելլ WDF | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 30 | 33691162 | XN-L չէք մակարդակ 1 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 31 | 33691162 | XN-L չէք մակարդակ 2 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 32 | 33691162 | XN-L չէք մակարդակ 3 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 33 | 33691162 | Էլեկսիս պրոլակտինի կալիբրատոր | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 34 | 33691162 | Էլեկսիս վիտամին D -ի պրեսիկոնտրոլ Elecsys ® Preci Control Vitamin D total II | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |
| 35 | 33690000 | Էլեկսիս թափման արկղ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 100% |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**<<ԳՆՈՐԴ>>**

**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ**

**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**

**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ**

**h/h 11500166513800**

**ՀՎՀՀ 01503448**

**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

_______________________

**(ստորագրությունը)**

**Կ.Տ**

**<<ՎԱՃԱՌՈՂ>>**

**«Կոնցեռն-Էներգոմաշ»ՓԲԸ**

**Հասցե՝ Ք.Երևան, Արզումանյան 32-10**

**Բանկ՝ «Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան»ՓԲԸ**

**Հ/Հ 217002182558001**

**ՀՎՀՀ 01210095**

**Տնօրեն՝ Բ. Թադևոսյան**

_______________________

**(ստորագրությունը)**

**Կ.Տ**

*Հավելված N 3*
*«      »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
______________________________
հվհհ __________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
______________________________
հվհհ __________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      » «              » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N ___ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.